ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 01-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է,

Հաստատել 30 հունվարի 2020 թվականի Լեռնապատ համայնքի ավագանու թիվ 01 նիստի օրակարգը ըստ հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱԶՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6 ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի ավագանու

30 հունվարի 2020 թվականի 01-Ա որոշման

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 24-ի <<Լեռնապատ համայնքի 2020թ.-ի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

3 Լեռնապատ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին

4 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտ ներկայացնելու մասին

5.Համայնքի սոցիալական անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

6. Լեռնապատ համայնքում մետաղյա սյուներից օգտվելու համար <<Սմարթ-Նեթ>> ՍՊԸ-ին մալուխ անցկացնելու թույլտվություն տալու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, 27փողոց, 7/6 Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N2-Ն

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24- Ի <ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 24-ի <<Լեռնապատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N61-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 2-6 հավելվածների/կավելված/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԱԶՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6 ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի

30.01.2020թ.N2-Ն որոշման

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| Եկամուտներ | 60 438,2 | հազ. դրամ |
| Ծախսեր | 75 853,6 | հազ. դրամ |
| տարեսկզբի ազատ մնացորդ | 15 415,4 | հազ. դրամ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 3-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77 հոդվածի 3 կետով՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լեռնապատ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը՝ հաշվեկշիռ մուտքագրել տոնածառ՝ արժեքը 24000 դրամ և , էլ ջեռուցիչ՝ արժեքը 17700 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4 .ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5 ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6 ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ.

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 04-Ա

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով,

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին ներկայացնելու ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային երկու հայտ՝

1.Համայնքի կարիքների համար գյուղտեխնիկայի և գյուղատնտեսական սարքավորումների ձեռք բերում՝ համայնքի կողմից ներդրում 5000,0 հազ դրամ:

2.Լեռնապատ համայնքի 11-րդ փողոցի չասֆալտապատված հատվածի վերականգնում և ասֆալտապատում՝՝ համայնքի կողմից ներդրում 7500,0 հազ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 5-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 06—ի Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան և ստացված դիմումները՝ նորածինի և մահացածի ընտանիքի անդամի, և սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ ըստ հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի ավագանու

2020 թվականի հունվարի30-ի N5--Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

**Նորածինի .ընտանիքներ՝**

1.Հակոբջանյան Արամ Արթուրի 10/տասը հազ/դրամ
2. Եղիազարյան Գագիկ Սեյրանի 10/տասը հազ/դրամ
3. Հակոբջանյան Հովհաննես Ռազմիկի 10/տասը հազ/դրամ

Ընդհամենը՝ 30/երեսուն /հազ դրամ

**Սոցիալապես անապահով ընտանիքներ՝**

1.Մելիքսեթյան Ալբերտ Ռոբերտի 50/հիսուն/ հազ դրամ
2. Պեպանյան Տիգրան Շավարշի 50/հիսուն/ հազ դրամ

Ընդհամենը՝ 100 /հարյուր//հազ դրամ

**Մահացածի ընտանիքներ՝**

1.Դավոյան Նարինե Սուրենի 50/հիսուն/հազ դրամ
2. Ղարիբյան Վարդուհի Ռուբենի 50/հիսուն/հազ դրամ

Ընդհամենը՝ 100/հարյուր /հազ դրամ

**Համայնքի ղեկավար՝** **Ս. Աբազյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 06-Ա

### ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԵՏԱՂՅԱ ՍՅՈՒՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ <<ՍՄԱՐԹ-ՆԵԹ>> ՍՊԸ-ԻՆ ՄԱԼՈՒԽ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Սմարթ-Նեթ>> ՍՊԸ-ի տնօրենի դիմումը, հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով,

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին <<Սմարթ-Նեթ>> ՍՊԸ-ին Լեռնապատ համայնքում ինտերնետ ծառայության համար մալուխ անցկացնելու նպատակով օգտվել փողոցներում առկա մետաղյա հենասյուներից:

2.Սահմանել յուրաքանչյուր հենասյան համար ամսական 100 դրամ վարձավճար, կնքել համապատասխան պայմանագիր մեկ տարի ժամկետով, երկարաձգման իրավունքով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ